ՀԵՂԻՆԷ

Վ. Է Պ

Տ-ին Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

1

Մի փոքրիկ, բայց գեղեցիկ պարտիզում ընկուզենիների տակ նստած էր տասներեք-տասնութ տարեկան ջահել աղջիկ և ձեռքումը տրորում էր վարդի ծաղիկներ։

Նորանից մի քանի քայլ հեռու ծառին կոթնած կանգնած էր մի քսանմէկ տարեկան երիտասարդ։ Թէև օրը շոք էր, բայց նոր ջրած դալարը, բացուած վարդերն ու մարգերի միջով հոսող առուն ամբողջ պարտէզի մէջ ախորժելի զովութիւն ու բուրմունք էին սփռում։ 1866 թուի մայիս ամիսն էր, Կովկասում ամենասքանչելի ամիսներից մէկը։

—Հեղինէ, հօ՛ էլի բան չի՞ պատահել քո և իշխանուհու մէջ, հարցրեց մոերմաբար երիտասարդը և սկսեց անթարթ նայել իւր մօրաքրոջ աղջկայ լացակրկնած աչքերին։

—Ա՛յ, Նիկոլա, անվճռական կերպով պատասխանեց օրիորդը, բայց քեռակինը ինձ այն... գենեռալին տալու միտքը չի թողել, սպասում է միայն, որ ես, ինչպէս նա ասում է... «խելքի գամ»։

—Իսկ այդ սպասելու միջոցին երևի քեզ անդադար նախատում է, թէ նորա բոլոր երախտիքը մոռանում ես, կծու հեգնութեամբ արտասանեց Նիկողայոսը և իսկոյն զղջաց բերնից ակամայ դուրս թռած խօսքերի համար։—Հանգիստ եղիր, Հեղինէ, այդ ամենը կանցնի, ես միայն մի բանից եմ վախենում...

—Ինչի՞ց, մի երկարացնի, ասա։

—Որ իշխանուհու անտանելի յանդիմանութիւններից յուսահատած յանկարծ հաւանութիւն տաս։

—Հաւատացած եղիր, որ այդ չի լինիլ, պատասխանեց Հեղինէն և սիրալիր հայեացքով նայեց մօրաքրոջ որդուն։

—Տես, Հեղինէ, չ՝ընկճուես, վճռիդ հաստատ կաց, զգացած արտասանեց Նիկողայոսը և բռնեց Հեղինէի ձեռքը։ Ես չեմ կարող առանց համակրութեան վերաբերուել ամուսնութեան՝ իբրև մի ամենավսեմ հաստատութեան, որ որոշում է մարդու և կնոջ յարաբերութիւնը՝ սիրով, բարեկամութեամբ, ընդհանուր նպատակներով ու խորհուրդներով կապած երկու էակների ներդաշնակ միաւորութեան ձևով։ Եթէ կան աստուածային հաստատութիւններ, ամուսնութիւնը այնքան սուրբ, վսեմ ու իմաստալից հաստատութիւն է, որ ամենից շատ նա՝ սկէտք է աստուածային համարուի։

Օրիորդի դէմքը աւելի և աւելի պարզուում էր։

—Առաջին անգամն եմ տեսնում, Նիկօլա, որ մի երիտասարդ այդքան յարգանքով վերաբերուի ամուսնութեան։

Երիտասարդը երկար խօսում էր այդ հարցի մասին։ Հեղինէն խիստ փափագով ականջ էր դնում նորա խօսքերին, առանց մի բոպէ աչքը երեսից կտրելու։ Նիկողայոսը ոչ միայն սաստիկ սիրում էր իւր մօրաքրոջ աղջկան, այլ և քաղցր պարտականութիւն էր համարում իւր համար պաշտպանել նորան։ Ոչ եղբայր ունենալով, ոչ քոյր, նա մանկութիւնից սովորել էր իրան նորա հովանաւորողը համարել։ Նա վախենում էր, որ մի գուցէ իշխանուհին, Հեղինէից ազատուելու համար, նորան տայ առաջին պատահած մարդուն. այդ միտքը նորան շատ անհանգիստ էր անում և այդ պատճառով, օգուտելով ամեն յարմար առիթից, նա խօսում էր մօրաքրոջ աղջկայ հետ այդ խնդրի մասին։

Նոքա գրաւուած խօսակցութեամբ երկար զբօսնում էին պարտէզում, երբ որ յանկարծ լսեցին իշխանուհու զիլ ձայնը. կարծես սառը ջուր ածեցին նոցա գլխներին։

—Հեղինէ, ո՞ւրտեղ ես, շուտ արա՛, արի՛, դոչում էր իշխանուհին։

Բարձրանալով վերև իւր սենեակը Հեղինէն պատահեց իշխանուհուն, որ նորա վերայ խիստ հայեացք գցեց։

—Ի՞նչ ես գժի նման վազէ վազ անում նորա հետ, այն... Այդ Նիկողայոսը իրան շատ անվայել կերպով է պահում։ Գնա մաղերդ ուղղիր, մի քանի ժամանակ է աչքիս ուրիշ տեսակ ես երևում, և վերջապէս աղջկան ի՞նչ սազ կը գայ Աստծու օրը առաւօտից մինչև երեկոյ ջահել տղայի հետ լինել։

Հեղինէն կարմրատակեց, քիչ էր մնում մի խիստ խօսք ասէր, բայց իրան զսպեց և, ժժգոհ հայեացք գցելով իշխանուհու վերայ, յանդիմանօրէն արտասանեց.

—Քեռակին, ես չէի սպասում այդպիսի նախատինքի, մի՞թէ նա իմ եղբայրը չէ, մանկութիւնից միասին չե՞նք մեծացել։

—Գլուխս տարար դու քո հակաճառութիւններով, ամենևին ուշադրութիւն չես դարձնում տկարութեանս, խստութեամբ ընդհատեց նորա խօսքը իշխանուհին ու ձեռքերը դրեց քունքերին։ Մի րոպէ անցած նա նորից սկսեց աւելի մեղմ ձայնով. աշխատիր շքեղ հագնուել, այսօր մեզ մօտ հիւրեր կը լինեն։ Որքան կարող ես քաղցր վարուիր գեներալի հետ, նա... հասկանում ես... շատ խելօք, կրթուած մարդ է, լաւ տոհմի որդի, բարձր դիրք ունի. այդ բոլորի մասին ես քեզ հետ արդէն խօսել եմ։ Ցոյս ունիմ, Հեղինէ, խելքի կը գաս և չես հրաժարուիլ այդպիսի ամեն կողմից շահաւէտ ամուսնութիւնից։ Պատրաստուիր, վաղը նա քեզ պաշտօնապէս առաջարկութիւն պէտք է անի, ես ու քեռիդ արդէն հաւանութիւն ենք տուել։

—Մի՞թէ՞ բարի քեռիս ուշադրութեան չ՚առաւ այն բոլոր պատճառաբանութիւնները, որ ես բերի այդ ամուսնութեան դէմ։ Սիրելի քեռակին, ազատեցէք ինձ այդ մարդուց, ես չեմ կարող նորան սիրել։

—Ո՞վ է քեզ ստիպում, որ այժմ սիրես նորան. կը պակուես՝ յետոյ կը սիրես։ Իմ ժամանակ աղջիկները շատ անգամ մինչև նշանդրէքը չէին էլ իմանում, թէ ով է նոցա կին ուզողը, սակայն այդ չէր արգելում նրանց բախտաւոր լինել։

—Քեռակին, մի մոռացէք, որ նա ինձ աւելի հայր կը սազի, քան ամուսին. ինչ որ ուզում էք պատրաստ եմ կատարելու...

—Դու կեանքս մաշելու ես, գոռում էր իշխանուհին զայրացած, հապա քեզ ի՞նչ մարդ է պէտք։ Նա այնքան աղնիւ է, որ

մի խօսք անգամ չի ասում օժիտի մասին. այդպիսի մարդ, ծրագով որ ման գաս, չես գտնի հիմիկւայ ժամանակները։ Ապերախտ, ոչինչ բանի տեղ չես դնում իմ բոլոր հոգացողութիւններս քեզ համար։ Օ՛ֆ, Տէր Աստուած, ինչպէս հոգիս մաշում է այս անիրաւը։

Մի քանի բոպէ անցած իշխանուհին հիստերիկա ընկած գալարւում էր անկողնում, հեկեկում էր ու տնքում։ Թէև առաջին անգամը չէր, որ Հեղինէն իշխանուհուն այդ դրութեան մէջ էր տեսնում, բայց նրան այնպէս էր թւում, թէ այս անգամ հիստերիկան առաջւանից խիստ է, և նա սաստիկ վախեցաւ։ Խեղճը մնացել էր կանգնած՝ անզգայ, շւարած, չէր իմանում ինչ անի. ջուր էր տալիս ու օդեկոլոնով թրջում իշխանուհու քունքերը, յետոյ սկսում համբուրել նորա ձեռքերը ու ուզում՝ դլխատակը, բայց անօգուտ։ Վերջապէս, երբ որ բժիշկն եկաւ, դեղատոմս գրեց ու ասաց, որ ոչինչ առանձին բան չը կայ, խեղճ աղջիկը հանգստացաւ։ Եթէ նա մի քիչ փորձւած լինէր, բժշկի երկմիտ ժպիտից կը հասկանար, որ իշխանուհու հիւանդութեան անունը կապրիզ է։

Մի ժամից յետոյ իշխանուհին՝ ըստ երևոյթին՝ հանգստացել էր։ Ճաշին հիւրեր պէտք է գային։ Հեղինէն շւարած աչք էր ածում չորս կողմը ու միտք անում, թէ ինչպէս իշխանուհուն օգնի և թեթևացնի հիւրերին ընդունելու հոգսերը։

Իսկ հիւանդը յիշելով, որ ժամի երեքին երկու նորեկ պատուաւոր հիւրեր են գալու, յանկարծ՝ կարծես հրաշքով՝ կենդանութիւն ստացաւ ու սկսեց ծանր ու բարակ հագնւել, զուքւել։ Հեղինէն կանգնած տեղը սառած մնաց ու չէր իմանում ուրախանայ թէ զարմանայ այդ յանկարծական փոփոխութեան վերայ։

Ճաշի ժամանակ իշխանը ներկայացրեց իւր քեռորդուն հիւրերից մի քանիսին։

—Տղա՛յ եմ ասել, կատարեալ զինուորական է, պէտք է գւարդիան տամ։

Նիկոզայոսը ժպտաց։

—Հը, ի՞նչ ես ծիծաղում,—Թանաք լպստելը աւելի լա՞ւ է, ի՞նչ, բարձրաձայն քրքիջ արձակեց իշխանը ու սկսեց սաստիկ ոգեւորութեամբ, ձեռները շարժելով, պատմել վերջին պատերազմի մանրամասնութիւնները։

Յետոյ սկսեց տաք վիճաբանութիւն զանազան բարձր պաշտօններ ստացած ծառայողների մասին, այս ու այն մարդու պաշտօնական դրութեան անհաստատութեան մասին և այլն։

—Ասա ինդրեմ, Հեղինէ, միթէ՞ ձեզ մօտ միշտ այդպիսի հասարակութիւն է հաւաքւում, որ ես ահա մօտ երկու ամիս է ձեր տանը տեսնում եմ, հարցրեց Նիկողայոսը հիւրերի գնալուց յետոյ։

—Այո՛, մեզ մօտ միայն գեներալներ են գալիս, երիտասարդներից համարեա ոչինչ չի լինում մեր տանը, քեռակինը աղմուկ չի սիրում։

—Այդ հօ՛ միևնոյնն է թէ մարդ կենդանի գերեզման մտնի։ Դոցանից ոչ մի կենդանի խօսք, ոչ մի առողջ միտք չես լսի երբէք։

Նիկողայոսը տաքացած երկար շարունակում էր այդ խօսակցութիւնը։

Վեց տարեկան ժամանակ զրկւելով մօրից՝ Հեղինէն մինչև տասներկու տարեկան հասակը ապրում էր իւր հօր մօտ, որ նորա միակ առաջնորդն ու գաստիարակն էր։ Հեղինէի հայրը քաղաքում աղնիւ և բարեսիրտ մարդու անուն ունէր։ Զրկւելով սիրած ամուսնուց, նա իւր սիրող սրտի բոլոր զգացմունքներն ու հոգսերը ամփոփեց իւր միակ զաւակի Հեղինէի վերայ։ Ծառայութիւնից մնացած բոլոր ազատ ժամերը նրան էր նւիրում՝ ժամանակ էր անցկացնում հետը, խաղում էր և, գիրկն առնելով, երկար խօսում էր հետը նրան մատչելի լեզուով։ Հայրը Հեղինէին չէր ճնշում երեխայական չարութիւնների համար, թողնում էր սրտի ուզածի չափ զարճանալ. նա միայն մի բանի էր շատ հոգս տանում,—որ Հեղինէի մէջ անարատ մնայ և չը կորչի անկեղծութիւնը։ «Ամեն բան, ինչ անես, քեզ կը ներեմ, բացի ստից», յաճախ ասում էր հայրը, երբ որ նա մի որ և է աններելի չարութեան մէջ բռնւելիս աշխատում էր մի կերպով արդարանալ։ Այսպիսով Հեղինէն ազատ մեծանում ու զարգանում էր և թէև քիչ բան էր սովորում, սակայն այդ քիչը նա սովորում, իւրացնում էր սիրով, հասկանալով։ Բայց այդ երկար չը տևեց. տասներկու տարեկան հասակում Հեղինէն զրկւում է իւր սիրելի հօրից, մնալով բոլորովին որբ, մի չնչին ժա-

ուանգութիւնով։ Նորա քեռին, իշխան Նակունին վերցնում է նորան իւր խնամատարութեան տակ և ուզում է՝ ինչպէս հանգուցեալը իրան խնդրել էր՝ տանու կրթութիւն տալ նրան, բայց կինը, պատճառ բերելով իւր ջղերի խանգարած դրութիւնը, նորան ինստիտուտ է տալիս։ Վերջը ուսումն աւարտելուց յետոյ Հեղինէն զարմանում էր տեսնելով, որ ինստիտուտում իւր հինգ տարուայ ընթացքում ձեռք բերած գիտութիւնը ոչինչ է համեմատելով այն տեղեկութիւնների հետ, որ նա խաղ ու պարով սովորել էր տանը հօրից։

Հեղինէի մանկութեան ամենամտերիմ բարեկամը նորա մօրաքրոջ որդի Նիկողայոս Վրթանէսեանն էր, որի հետ նա տեսնում էր համարեա ամեն օր։ Իսկ նորա ինստիտուտ մտնելուց յետոյ, Նիկողայոսը գնում էր մօտը համարեա ամեն կիւրակէ՝ ընդունելութեան ժամերին։ Ուսումնարանական յիշողութիւններից ամենից շատ մտաբերում էր Հեղինէն այն չարաբախտ օրը, երբ Նիկողայոսը գնաց Մոսկուա համալսարան մտնելու։

Ինստիտուտը աւարտելուց յետոյ Հեղինէին իշխան Նակունին վերցրեց իւր տունը։ Զը նայելով որ Հեղինէն քեռու տանը երբեմն իրան միայնակ էր զգում, զուրկ ծնողական փայփայող սէրից, բայց նա դեռ ջահել էր. նորա զգայուն ու վառվռուն հոգին սովորեց կեանքի նոր պայմաններին, նորա սիրալիր սիրտը շուտով սիրեց քեռակնոջը, քեռուն և այն ամենքին, որոնք մօտիկ էին նրան. ամենքը նրան բարի էին թւում, չար ասած բանը գոյութիւն չ՝ունէր նորա համար, մի խօսքով ամեն բան ժպտում էր նրան։

Հեղինէի քեռին, իշխան Նակունին, յիսունուհինգ տարեկան, բայց թարմ ոյժերով ու քաջառողջ գեներալ էր. Զէրքէզների դէմ վարած կռիւների շնորհիւ նա քաջ ու ազնիւ զինուորականի հռչակ էր ստացել։ Նորա բարձր հասակը, լայն թիկունքը, դուրս ընկած կուրծքը, գանգրահեր գլուխը, երեսի սաստիկ թխութիւնը ու խիստ աչքի ընկնող, կոպիտ դիմագծերը շատ լաւ համապատասխանում էին նորա ծաղկացրած, չափազանցրած պատմութիւններին իւր պատերազմական կեանքից, որոնցով նա շատ սիրում էր զբաղեցնել իւր հիւրերին, օգտուելով ամեն յարմար առիթից։

Իշխան Նակունին յաւակնութիւն չ՝ունենալով ոչ մեծ խելք ոչ էլ բարձր կրթութիւն ունեցող կարծելու իրան, անվեհերութիւնն

ու քաջութիւնը ամեն բանից բարձր էր դասում։ Հաւատացած լինելով, որ կինը շատ խելօք ու հմուտ կերպով է վարում տան ներքին գործերը, գեներալը բոլորովին նորա կամքին էր թողել երեխաների կրթութիւնը և՝ որ ասես՝ ոչ մի բանում չէր խառնւում տանու գործերին։ Զը նայելով իւր ծեր հասակին, նա ոչ միայն հանգըստութիւն չէր փնտրում, այլ միշտ յուզւում էր, տրտնջում էր խաղաղութեան երկարատևութեան վերայ. սիրտը վտանգաւոր արկածներ էր փափագում։ Տանը չէր կարողանում նստել, բացի որոշւած երեկոներից, երբ որ նոցա մօտ հիւրեր ոչխոք է գային։

Հեղինէն սկզբում մի քիչ վախենում էր բարկացկոտ ու դիւրագրգիռ քեռուց, բայց շուտով համոզւեց, որ նա իւր կարծածիցը աւելի բարի է։ Իշխանի զայրոյթը առհասարակ շուտով անցնում էր, նա դորանից յետոյ սովորականից աւելի քաղցր էր վարւում, առնում էր գիրկը Հեղինէին կամ թէ իւր կոշտ արևառ ձեռքով փաղաքշում նորան։ Իշխան Նակունու կինը, Մարիա Նիկոլաևնան կամ, ինչպէս սովորաբար անւանում էին նորան ազգականները, իշխանուհի Մայիկոն՝ խելօք և գործնական կնոջ համարումն ունէր։ Զը նայելով որ քառասնուհինգ տարեկան էր, նա դեռ սիրուն էր։ Եւ թէև համարեա ամենևին կրթութիւն չէր ստացել, բայց մանկութիւնից վայելչակիրթ կոչւող շրջանում ապրած ու մեծացած լինելով, նա ձեռք էր բերել քաղաքավարական արտաքին փայլ։ Զ'ուզենալով յետադէմ կին համարւել, նա երբեմն պաշտպանում էր նոր գաղափարներ, բայց իսկապէս նա երբէք չէր կարողանում հաշտւել այդ գաղափարների հետ և ատելով ատում էր երիտասարդութիւնը, որ հասարակութեան մէջ նոր գաղափարների ներկայացուցիչն է։ Իշխանուհին շատ փոփոխամիտ բնաւորութիւն ունէր. երբ որ նորա կամքումը էին շարժւում, նա չափից դուրս բարի ու քաղցր էր լինում, բայց հէնց որ մի բան նորա սրտովը չէին անում, գազազում էր և ամեն բանի վերայ փնթփնթում ու կռւում էր։ Սաստիկ սիրելով հանգիստ կեանք, իշխանուհին հեռացրեց իրանից իւր երկու փոքրահասակ տղաներին, ուղարկելով նոցա Ռուսաստան ուսում առնելու։ Մարդը հակառակ էր այդ բանին, բայց իշխանուհին համոզեց նորան, որ երեխաները առհասարակ ծնողներից հեռու աւելի լաւ են սովորում։

Այդպիսով ազատելով իրան ամեն տեսակ հոգսերից, իշխանուհին ամբողջ օրը զարմանքներով էր անցկացնում, որոնցից ամենից շատ սիրում էր բէզիկ (Բզմ-խաղ) խաղալը։ Հասկանալի է, որ նա չէր կարող ուրախ սրտով ընդունել իւր տունը Հեղինէին և դրանով խանգարել իւր անդորրութիւնը. նա երկար ժամանակ դիմադրում էր իշխանի ցանկութեանը, բայց վերջապէս վախենալով հասարակաց կարծիքից սարսափած եղաւ զիջել իշխանի խնդիրքին։

—Այդ աղջկայ պատճառով պէտք է առաջւայ անհոգ, ազատ կեանքից ձեռք քաշեմ, բայց՝ յոյս ունիմ՝ այդ երկար չի տևիլ։ Նորա պէս գեղեցիկ աղջիկները երկար չեն նստում տանը, յաճախ վիխիթարում էր իրան իշխանուհին։

Մի ամիս էր անցել այն օրից, երբ Հեղինէն ոտք դրեց Նակաւնու տունը։

—Յոյս ունիմ, Մայիկո, որ դու խեղճ որբի համար հարազատ մօր տեղը կը բռնես։

—Զե՞ս ամաչում, Գէորգ, որ դեռ կասկածում էլ ես, թէ ես նորան իմ աղջկայ պէս կը սիրեմ։ Մի՞թէ ես տեղիք եմ տուել ինձ անսիրտ համարելու, նեղացած ձայնով պատասխանեց իշխանուհին։

—Ոա՛չը, չեմ իմանում ինչպէս խօսեմ քեզ հետ. ինչ ասում եմ սրտիդ դիպչում է. իմ ասածը այդ չէր, գոռաց իշխանը, խփելով իւր ճակատին ու սկսեց մեծ քայլերով ճեմել սենեակում։ Ես իմ Աստուածը, Մայիկո, աւելի հեշտ է թշնամուց թնդանօթ խլել քան թէ կնոջը մի բան հասկացնել։ Լսիր թէ բանը ինչումն է։ Հեղինէի հայրը մեռնելիս խնդրեց ինձ, որ աշխատեմ լաւ կրթութիւն տալ իւր աղջկան։ Որ միտքս է դալիս, Մայիկո, հանգուցեալի վերջին աղերսալից հայեացքը, սիրտս ուղում է...

—Զեմ հասկանում թէ միտքդ ինչ է, անհամբերութեամբ ընդհատեց նորա խօսքը իշխանուհին. իմ կարծիքով մենք նրան առանց այն էլ աւելի ուսում ենք տուել քան թէ հարկաւոր է մի աղքատ աղջկան։

—Այդպէս մի խօսիլ, Մայիկո։ Եթէ նա իմ աղջիկս լինէր, ես կասէի, թող կարդալ-գրել, սրբազան պատմութիւն ու կարուձև սովորի,—քրիստոնեայ մարդու ու տնարար աղջկայ համար դրանից աւելի բան պէտք չէ։ Բայց քրոջս աղջկայ համար ես պէտք է անեմ

այն, ինչ որ իւր հարազատ հայրը կանէր՝ եթէ կենդանի լինէր. չեմ ուզում որ հոգուս մեղք լինի։

Իշխանը խորը հոգոց քաշեց ու ընկաւ բազմոցի վերայ։ Իշխանուհին կարծես զգացուեց, ասաց, որ կը մոռանի այդ հարցի մասին։

—Ախր գիտեմ, որ խելօք կին ես։ Դու գիտես հօ՛, Մայիկօ, որ ես վախկոտներիցը չեմ, թուր ու հրացանից երեսս չեմ թեքիլ, աշխարհում ոչնչից չեմ՝ վախենում, բայց խիղճս չի տանի անկատար թողնել մեռնող մարդու խնդիրքը։

Այդ խօսակցութիւնից մի ամիս էլ չէր անցել, որ Հեղինէի համար ֆրանսերէն ու գերմաներէն լեզուների և երաժշտութեան ուսուցիչներ վարձեցին։ Հայերէնի մասին ամենևին խօսք էլ չ'եղաւ, որովհետև թէ իշխանը թէ իշխանուհին, որոնք շատ վատ էին խօսում իրանց մայրենի լեզուով, երբէք մտքներումն էլ չէին անցնում, թէ անհրաժեշտ է սովորել մայրենի լեզուն։ Իշխանուհին էլի կիսատ պռատ կարդալ-գրել գիտէր հայերէն, իսկ իշխանը մինչև անգամ իւր անունը ստորագրել չէր կարողանում մայրենի լեզուով։ Իրար հետ մարդ ու կին միշտ ռուսերէն կամ վրացերէն էին խօսում։ Հայերէնը յարգի չէր վայելչակիրթ կոչուող ընտանիքներում։ Այդ կողմից Վրթանէսեանի ազդեցութիւնն էլ նշանակութիւն չունէր Հեղինէի համար. Վրթանէսեանը մանկութիւնից այնպիսի պայմանների մէջ էր ապրել, որ մայրենի լեզուն իմանալը ամեն մի հայի անհրաժեշտ պարտակութիւն չէր համարում։

Հեղինէն սկսեց եռանդով պարապել ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով ու երաժշտութիւնով։ Ազատ ժամերին նա կարդում էր ձեռքն ընկած գրքերը։ Ոչ ոք հոգս չէր քաշում նորա համար գրքերի ընտրութիւն անելու և ոչ ոքի նա հաշիւ չէր տալիս իւր կարդացածի մասին։ Ուսումնարանական ընկերուհիներից միայն Կատարինէ Արգարեանն էր նրան այցելում, բայց նա էլ շուտով հեռացաւ Թ.-ից։

II

Հեղինէն օրէցօր աւելի և աւելի էր զգում իւր միայնակութիւնը. ոչ զինուորական քեռին, ոչ ջղային քեռակինը, ոչ էլ գեներալների ու ազգականների հասարակութիւնը չէին կարող բաւարարութիւն տալ նորա պատանեկական անփորձ սրտի իղձերին։ Օրիորդի

երևակայությունը միշտ զբաղված էր իւր ստեղծած պատկերներով. նորա յուզված միտքը յաճախ վերանում էր իրական աշխարհից. նա արդէն սկսել էր մութ կերպով գիտակցել, թէ ինչ-որ շատ կարևոր բան իրան պակասում է, թէ իւր կեանքը դատարկ, անբովանդակ է, և այդ՝ սկզբում մութ՝ գիտակցությունը քանի գնում աւելի և աւելի զօրանում էր։ Հետզհետէ մօտենում էր այն օրը, երբ պետք է նորա տասնութ տարին լրանար և նա օր օրի վրայ սիրունանում էր. ուսումնարանի նստական կեանքից մի քիչ կռացած մէջքը շիտկւել էր, այնպէս որ մարդու խելքը գնում էր՝ նայելով նորա շնորհալի բարձր հասակին. նուրբ իրանը լցւել, զարգացել էր. գեղեցիկ սև աչք-յոնքն ու մազերը աւելի ևս գեղեցիկ էին երևում նորա սպիտակ ու կարմրայտ, երկարուկ երեսի վրայ։ Բայց Հեղինէի գեղեցիկ դէմքում ամենադուրեկանը նորա գրաւիչ ժպիտն ու խոր, ծով աչքերի վերին աստիճանի քաղցր հայեացքն էր, որոնք կարծես անանշմարելի էին դարձնում նորա թէև կանոնաւոր, բայց փոքր ինչ խիստ գիմագծերը։

Իշխանը քանի անգամ է, որ հասկացնում էր կնոջը, թէ Հեղինէի համար պէտք է երիտասարդ ծանօթներ գտնել. իշխանուհին՝ ըստ երևոյթին՝ համաձայն էր նրան, բայց երկուսն էլ, մէկը անհոգութիւնից, իսկ միւսը չափազանց զբաղված լինելով իւր անձնական խնդիրներով, ցանկութիւն յայտնելուց հեռու չէին գնում։

Մի օր, երբ Հեղինէն սովորականից աւելի էր զգում իւր միայնակութիւնը, նամակ բերեցին փօստից. նամակը Կատարինէիցն էր. նա հաղորդում էր Հեղինէին, թէ ինքը պատկւել է մի Գէորգ Սահառունի անունով շատ արժանաւոր երիտասարդի հետ և յափշտակութեամբ նկարագրում էր, թէ ինչպէս են միասին ապրում։ Հեղինէն երևակայութեամբ տեղափոխւեց Կատարինէի մօտ, առժամանակ մոռացաւ իւր դարդը, ուրախանալով ընկերուհու բախտաւորութեան վերայ։

Նոյն երեկոյ մի ուրիշ նշանաւոր դէպք էլ պատահեց։ Նրանց մօտ հիւր եկաւ Հեղինէի մօրաքրոջ որդին ու մանկութեան ընկերը՝ Նիկողայոս Վրթանէսեանը, որ օգուտ քաղելով քեռու հրաւէրից, վճռել էր նոցա մօտ մի քանի ժամանակ մնալ. այդտեղ նա կարող էր մի քիչ կազդուրել իւր խախտած առողջութիւնը։

Վրթանէսեանը միջահասակ մի երիտասարդ էր, չափազանց լղար ու գունատ։ Նորա անկանոն դիմագծերը ոչնչով աչքի չէին ընկնում, բայց երբ նա ոգևորած խօսում էր, նորա աչքերի փայլը այն աստիճան խելք ու եռանդ էր արտայայտում և ամբողջ դէմքը այնքան աղնիւ արտայայտութիւն էր ստանում, որ այդ ժամանակ նորան կարելի էր համարեա գեղեցիկ տղամարդ անուանել։ Մեծ խելքի ու ընդունակութիւնների տէր լինելով, բայց տոկուն աշխատութեան հակումն չ'ունենալով, Վրթանէսեանը չէր կարողանում որ և է գործի բոլորովին անձնատուր լինել, կենդրոնացնել մի բանի վերայ բոլոր իւր ոյժերն ու ջանքերը։ Դեռ փոքր հասակում, գիմնազիայում, նա իրան յատուկ յափշտակութեամբ գրաււում էր մէկ այս մէկ այն մասնագիտութիւնով։ Համալսարան մտնելով նա այն աստիճան յափշտակուեց հասարակական հարցերով, որ բաւարարութիւն չէր կարողանում գտնել չոր ու ցամաք գիտութիւնների ուսումնասիրութեան մէջ. մի բաժանմունքից միւս բաժանմունքն էր փոխւում, չը կարողանալով կանգ առնել մի որ և է մասնագիտութեան վերայ։

Հեղինէն շուտով հասկացաւ, որ Նիկողայոսը նման չէ այն մարդկանց, որոնց նա ամեն օր տեսնում է. նա նրանում մի այնպիսի բան նկատեց, որ կարող էր իւր սրտի խորքը թափանցել։ Եւ իրաւ, Նիկողայոսը միակ մարդն էր, որ Հեղինէի հօր մահից յետոյ կարող էր նորա վերայ բարերար ազդեցութիւն գործել։ Մի յարկի տակ կենալով նա ու Հեղինէն համարեա ամբողջ օրը միասին էին լինում. նա կարդում էր մօրաքրոջ աղջկայ համար իւր հետ բերած գրքերից, խօսում էր հետը և զարմանալով նկատում էր, որ նա օրէցօր փոխում է իւր կարծիքները, աւելի և աւելի իւրացնելով իւր համար բոլորովին նոր հայեացքներ։ Առաջին գլխում նկարագրած խօսակցութիւնից յետոյ մի ամիս էր անցել։ Վրթանէսեանը երկար փնտրում էր Հեղինէին. ամբողջ տունը ման եկաւ,— չը կայ, վերջապէս նորան գտաւ պարտէզում։ Հեղինէի ձեռին ինչ-որ գրոտած թերթեր կային։

—Կարծեմ, ինչ որ գրում էիր. կարելի՞ է տեսնել։

—Է՛, չիմար բան է, ժամանակդ ափսոս է,—ասաց Հեղինէն կարմրելով և չէր ուզում ցոյց տալ։ Ինստիտուտից սկսած ես սո-

վորութիւն եմ դարձրել թղթի անցնել այն բոլորը, ինչ որ մտքովս ու սրտովս անցնում է միայնակութեան մէջ։ Բացի թղթից ոչ ոք չունիմ, որին կարողանայի հաղորդել իմ տպաւորութիւնները։

— Մի՞թէ ինձ բարեկամ չես համարում, համարեա յանդիմանօրէն հարցրեց Նիկողայոսը։

— Բայց դու շուտով գնալու ես, ես էլի մենակ պէտք է մնամ։ Վերջին խօսքերն արտասանելիս Հեղինէի սիրտը տխրեց, բայց Նիկողայոսի համար դժուար չէր փարատել նորա վիշտը։ Նա պերճախօս էր. Հեղինէն մեծ հաճոյքով էր ականջ դնում նորա խօսքերին։

— Ա՛յ, այդպէս, երեխերք, ծիծաղէք ուրախացէք, այդ իմ հաւատիս մօտ է, ուրախ ձայնով արտասանեց Նակունին, պատահելով նրանց պարտէզում ճեմելիս։ Նիկօն շատ է լցւել ու լաւացել, չէ՞, Հեղիկ։ Մի՞տդ է ինչքան դեղնած ու լղար էր, երբ որ Ռուսաստանից եկաւ։

— Հա, քեռի, բայց ի՞նչ, քանի որ էլի կարող է հիւանդանալ, սրտացաւութեամբ պատասխանեց Հեղինէն։ Բժիշկն ասաց, որ Մոսկւայի օդը շատ վատ է Նիկողայոսի թոյլ կուրծքի համար։

— Ոչինչ. ես բոլորովին կազդուրւել եմ, այնպէս որ մէկ-երկու ամսից յետոյ աներկիւղ կարող եմ գնալ...

— Չէ՛, ինչ ուզում ես ասա, Նիկօ, ես քեզ էլ Ռուսաստան թողնողը չեմ,— խստութեամբ կտրեց նորա խօսքը քեռին։ Ո՞ւմ պատանքն էին հերու պատրաստել, էլ՞, մոռացել ես, հա՞։ Իսկ եթէ անպատճառ ուզում ես շարունակել ուսումդ, դնա արտասահման։

Նիկողայոսը կմկմաց, չը կարողացաւ մի վճռական բան ասել։ Քեռին հասկացաւ պատճառը։

— Գիտեմ, որ միջոցներդ չեն ներում արտասահման գնալու, բայց քանի ես ողջ եմ, ոչ դու, ոչ էլ Հեղինէն ոչ մի բանում կարօտութիւն չէք քաշիլ։

Վրթանէսեանն ու Հեղինէն սիրով ու երախտագիտական զգացմունքով սեղմեցին իրանց քեռու ձեռքը և երեքով պարտէզից տուն գնացին։ Իշխանուհին նստած բէզիկ էր խաղում։

— Գէորգ, նստի՛ր, իմ տեղը խաղա՛, ես այս բոպէին կը գամ,— դիմեց նա ամուսնուն, և Հեղինէի ձեռքը բռնեց ու հետը հիւրասենեակից դուրս եկաւ։

—Այսօր մեզ մօտ ճաշելու է քո հին ծանօթներից մինը—Տրունիցկին։ Որքան կարող ես ուշադիր եղիր գէպի նա։

Շատ լաւ մարդ է։ Երէկ մի տան միասին հիւր էինք, քո մասին շատ էր հարց ու փորձ անում։

—Միտոս չի գալիս, այդ ո՞վ պէտք է լինի,—խորհրդաւոր ժըպտաց Հեղինէն։—Հա՛, այժմ յիշեցի, անցեալ տարի նա լինում էր մեզ մօտ։

Եւ զարթնեց Հեղինէի երևակայութեան մէջ կանոնաւոր, ճուաձև ու թխագոյն դէմքով և շէկ մազերով, բարձրահասակ և վայելչակազմ երիտասարդի պատկերը. նա լաւ յիշեց, որ Տրունիցկին, չը նայելով, որ գեղեցիկ տղամարդ է, իւր վերայ անախորժ տպաւորութիւն էր գործում։

—Հիանալի մարդ է, ոչ մի պակասութիւն չես կարող գտնել մէջը,—հանեց նորան մտախոհութիւնից իշխանուհին։ Խելօք, ճարտար տղայ է. բացի դորանից հայրը մեծ կապեր ունի Պետերբուրգում, անկասկած որդին շատ առաջ կը գնայ։

Հեղինէն անտարբեր ականջ էր դնում իշխանուհուն։

Երբ որ ճաշին բոլոր հիւրերը հաւաքուեցին և օրիորդը մտաւ դահլիճը, Տրունիցկին բարձր հասարակութեան մէջ կրթուած կընտրէրի յատուկ ճարպիկութեամբ վազեց մօտը և սկսեց հաճոյախօսութիւններ թափել գլխին։ Հեղինէն ուշի ուշով նայեց նորա վերայ, կարծես ցանկանալով ստուգել իւր առաջուայ կարծիքը.—նո՛յն յանդուգն ծաղրը նրբագիծ շրթունքներին, նո՛յն կեղծ հայեացքը մեծ խաժագոյն աչքերում, նո՛յն լիրբ անձնապաստանութիւնը բոլոր շարժուածքներում։

Ճաշին Տրունիցկին նստած էր Վրթանէսեանի կողքին։ Մի քիչ քէֆովանալով, նա դարձաւ իւր հարևանին և շշնջեց նորա ականջին.

—Ի՞նչ սքանչելի, ի՞նչ սիրուն է ձեր մօրաքրոջ աղջիկը։ Երևի յաճախ համբուրում էք նորան, օգտուելով եղբայրական իրաւունքից։

Վրթանէսեանը քիչ էր մնում տեղն ու տեղը պատառ պատառ անէր լիրբ հարևանին, բայց իրան զսպեց։

Տրունիցկին չէր հեռացնում Հեղինէից իւր վավաշոտ հայեացքը և շարունակում էր իւր անպատկառ խօսակցութիւնը Վրթանէսեանի հետ։

—Ձայներդ կտրէ՛ք, պարոն, թէ չէ պատուհանովը դուրս կը գցեմ ձեզ,—շշնջեց նորա ականջին Վրթանէսեանը, կարմրատակած կատաղութիւնից։

—Ա՛յ, ա՛յ, ա՛յ, տես ինչ կրակի կտորն է եղել։ Է՛, բարեկամ շատ խակն էք երևում,—ծիծաղի գցեց Տրունիցկին։

—Մի քանի րոպէ անցած նա արդէն զբաղեցնում էր տիկիններին ու օրիորդներին քաղաքի ասէկոսէներով, բամբասանքներով։

—Ինչո՞ւ չէք խմում, պարոններ,—հիւրասիրում էր տանտէրը։—Բարեբեր Կովկասը այնպիսի անմահական խմիչք է ժեղ պարգևել, որ յանցանք է չը խմելը։

Ճաշից յետոյ տղամարդիկ սկսեցին բարձրաձայն խօսել. մէկը յարձակւում էր մոքերը վարակող նոր գաղափարների դէմ. միւսը հրապարակ էր հանում իւր ծանօթի կեանքի գաղտնիքները, մի ուրիշը տիկիններին զբաղեցնում էր երկդիմի, անպատկառ հաճոյախօսութիւններով, որ լսելով Հեղինէն ամօթից կարմրում էր։ Մի ժամից յետոյ տիկինների ու տղամարդկանց մեծ մասը նստեցին թուղթ խաղալու։ Հեղինէն գնաց իւր սենեակը։

Այդպէս էին ժամանակ անցնում միշտ իշխանն ու իշխանուհին. օր օրից տարբերւում էր միայն աննշան փոփոխութիւններով, իսկ ընդհանուր ոգին նոյնն էր։

—Պէտք է զարմանալ, որ շրջապատողների դատարկութիւնը չի ազդել Հեղինէի վերայ, մտածում էր Վրթանէսեանը փնտրելով սենեակներում մօրաքրոջ աղջկան։

—Ես եմ ասում, ո՞ւրտեղ ես,—ասաց նա գտնելով Հեղինէին։ Այստեղ շատ տօթ է, գնանք պարտէզ։

—Շատ լա՛ւ, իմ սիրտս էլ է ուզում պարտէզ գնալ։ Եւ նոքա թևանցուկ արած իջան պարտէզը, ուր՝ չը նայելով օրւայ շոքին՝ շատ հով էր։

—Այն ի՞նչ էիր կարդում, Հեղինէ,—հարցրեց Վրթանէսեանը երբ որ նոքա մտան պատատուկներով շրջափակած հովանոցը և նստեցին։

Քո բերած գրքերիցն է։ Նորանում նկարագրած անձնաւորութիւններից մէկը ինձ հիացնում է՝ ո՛րքան ղգացմունք, ո՛րքան հաւատ ունի դէպի լաւը։

Ահա իսկ հերոսական հոգու տէր մարդ։ Իմ կարծիքով, այդպիսի մարդիկ առաջւայ ժամանակները պէտք է աւելի շատ լինէին քան այժմ։

—Ինչո՞ւ։

—Այն ժամանակւայ կեանքը այժմեանի նման չէր. հերոսութիւն ցոյց տալու առիթներ աւելի էին պատահում, անվճռաբար պատասխանեց Հեղինէն։ Կամ գուցէ հերոսական հոգու տէր մարդիկ հիմիկւանից աւելի առիթներ չէին ունենում իրանց ցոյց տալու, բայց եղած առիթներից օգուտ էին քաղում...։

—Ճիշտ է, Հեղինէ, ներկայ ժամանակը աղքատ է նշանաւոր տաղանդների կողմից, բայց դորանից չի կարելի եզրակացնել, թէ հասարակութեան բարոյական ոյժերն էլ սպառւել են։

—Հապա ինչո՞ւ այժմ դժւար է գտնել այնպիսի նշանաւոր մարդիկ, որոնք հազար ու մէկ վտանգների ու հալածանքների ենթարկւելով դիմում են իրանց որոշած նպատակին և մի քայլ անգամ չեն շեղւում նորանից։

—Առաջւայ ժամանակի մտաւոր կեանքը առաջ էր գնում հասարակութեան աննշան փոքրամասնութեան, մի քանի անհատների գործունէութեան շնորհիւ, անհատների, որոնք՝ խիստ տարբերւելով իրանց շրջապատողներից՝ աւելի ևս զարմանք են պատճառում մեզ իրանց եռանդով։ Իսկ այժմ, Հեղինէ, այդպիսի անհատները էլ մեզ հսկաներ չեն թւում։

—Լաւ, Նիկոլա։ Շատերն ասում են, թէ առաջ կարելի էր հերոսական գործեր կատարել, զոհւել, վրէժխնդիր լինել ճնշողներից, իսկ այժմ միթէ՞ այդ բոլորը անելու առիթներ չը կան։ Թող ամէն մէկը վճռի վարւել այնպէս ինչպէս արդարութիւնն և ճշմարտութիւնն է պահանջում և շուտով կը զգայ, որ իւր մէջ էլ հերոսական ոգի կայ։

—Մի քիչ խորը որ նայես հարցին, Հեղինէ, հայեացքդ կը փոխես այժմեան կեանքի վերայ։ Բանն այն է, որ այն ոյժը, որ առաջ կենտրոնացած էր սակաւաթիւ անհատների մէջ և շլացնում էր իւր հսկայական ծաւալով, այժմ հազարաւոր մասերի բաժանւելով, մանրացել է. բայց չէ որ այդպիսով նա մատչելի է դարձել հասարակ ամբոխի համար։ Առաջւայ հսկաները իրանց մէջ էին ամ-

փոփում իրանց ժամանակակից հաւարակութեան բոլոր մտաւոր ու բարոյական ոյժերը։ Եւ որովհետև նոքա կատարեալ և միակ ներկայացուցիչներ էին այդ ոյժերի, անձնական ներկայացուցիչներ և ոչ հասարակական, քանի որ այն ժամանակ չը կար հասարակական ինքնագիտակցութիւն, - նոքա լուսաւորում էին միայնակ, թէև ի հարկէ շլացուցիչ լոյսով։ Նոցա վառած ճշմարտութեան լապտերը այժմ լուսաւորել է ամբողջ աշխարհը։ գիտնականների փակուած շրջանից նա տարածուել է և թափանցել ամբոխի խորքերը, մտել աղքատի խրճիթը։ Մի ժամանակուայ ազնուասիրական, արիստոկրատական գիտութիւնը այժմ ռամկավարական, դեմոկրատական է դարձել։

Հեղինէն գլխով նշան արեց, թէ չի հասկանում վերջին խօսքերի միտքը, բայց Վրթանէսեանը չը նկատեց այդ. իսկ յետոյ երբ որ տեսաւ մօրաքրոջ աղջկայ իւր վերայ յառած հարցական հայեացքը, սկսեց բացատրել։

—Այսինքն գիտութիւնը այժմ իւր առաջուայ անմատչելի բարձրութիւնից իջել է և դիւրըմբռնելի է դարձել հասարակ մահկանացուների համար։ Այժմ ռամկավարական սկզբունքն է իշխում հասարակական կեանքում, այնպէս որ հասարակութեան շահերին ծառայելու համար պէտք չէ անպատճառ հերոս, հանճար լինել, հասարակ մահկանացուն էլ այժմ կարող է գործել հասարակութեան օգտին...

Վրթանէսեանի խօսքը բերնին մնաց, որովհետև այդ րոպէին լսեց վերևից իշխանուհու ձայնը. նա կանչում էր Հեղինէին դաշնամուր ածելու։ Հեղինէն անսիրտ վերև բարձրացաւ իշխանուհու կամքը կատարելու։ Երկու-երեք կտոր ածելուց յետոյ նա նորից իջաւ պարտէզը և լուռ սեղմեց Վրթանէսեանի ձեռքը։

—Ի՞նչ ես միտք անում, Հեղինէ։

—Ես դեռ քո խօսածի ազդեցութիւնից չեմ ազատուել։

—Եւ երևի մտքովդ անցնում է, թէ ձեզ մօտ հաւաքուող հիւրերից անշուշտ շատ քչերն են որ և է լուրջ սկզբունքներով զեկավարում իրանց կեանքում։ Այո՛, Հեղինէ, նոցա մեծ մասը ուռնվէյն են խմում, շքեղ կառքերով զբօսնում ու վատնում հօրական փողերը առանց մտքներովն անգամ անցկացնելու թէ մարդս կեանքում մի որ և է կոչումն ունի։

—Ինչպէս Տրունիցկին,—հեգնական ժպիտով արտասանեց Հեղինէն և սաստիկ կարմրեց։

—Հեղինէ՛, Հեղի՛կ, ո՞րտեղ ես, չես երևում,—լսեց յանկարծ մի քայլ հեռուից։

Ձայնը ծանօթ էր. Հեղինէի սիրտը թնդաց, երեսը պայծառացաւ, և նա ուրախ- ուրախ վազ տուեց շքեղ հագնուած ջահէլ տիկնոջը դիմաւորելու։

—Բարև, սիրելի Հեղիկ։

—Կատեա, այդ դո՞ւ ես, սիրտս ուրախութիւնից ուզում է ճաքել։ Ո՞ր խաչիցն է,—աղաղակեց Հեղինէն փաթաթուելով ընկերուհու վզին։

—Ջանիս դարդ է դարձել, որ այսքան ժամանակ է այստեղ եմ ու նոր եմ քեզ մօտ գալիս։

—Վաղո՞ւց ես եկել։

—Երկու շաբաթ կը լինի։

Հեղինէն յանդիմանօրէն նայեց նրան։

—Ների՛ր, հոգիս, հաւատա, որ ամէն բոպէ մտքումս եղել է քեզ մօտ գալ, բայց չեմ կարողացել կատարել սրտիս փափագը։ Դու դեռ չը գիտես, թէ ինչ գլխացաւանք է տուն ու տեղ սարքելը։ Միծաղդ չի՞ գալիս, որ ես այժմ տիկին եմ, հա՛, հա՛, հա՛։

—Շատ ծիծաղելի է երևում ինձ,—Կատեան՝ տիկի՛ն։ Բայց ես մոռացայ՝ առաջինը—շնորհաւորել մարդու գնալդ և երկրորդ՝ ներկայացնել քեզ իմ մօրաքրոջ որդի—Վրթանէսեանին։ Նիկողայոսը անշնորհ կերպով գլուխ տուեց, և մի քանի բոպէից յետոյ հեռացաւ իւր սենեակը։

—Մօրաքրոջդ որդին ինձ դուր եկաւ, ափսոս որ լաւ ձևեր չ՚ունի,—ասաց Կատարինէն նորա գնալուց յետոյ։

—Օ՛, հիանալի աղայ է, հաւատացած եմ, որ շատ կը հաւանես նորան։

—Այժմ այն միայն տեսայ, որ հասկացող մարդ է, մեզ մենակ թողեց։ Ես քեզ հետ շատ բան ունեմ խօսելու։

Նոքա ձեռք ձեռքի տուին, նստեցին ահագին ընկուզենու տակ և սկսեցին պատմել միմիանց այն բոլորը, ինչ որ գլիններովը անցել էր վերջին երկու տարուայ ընթացքում։

III

Թ-ից հեռանալու նախընթաց օրը Վրթանէսեանը ձեռները յետևին դրած մտայոյզ մարդ էր գալիս դահլիճում։ Իշխանն ու իշխանուհին տանը չէին։ Հեղինէն տխուր կանգնած էր պատշգամբը տանող ապակիաշէն դրան մօտ և շուտ շուտ նայում էր մօրաքրոջ որդուն։

—Ա՛խ, ի՞նչ պէտք է անեմ քո գնալուց յետոյ,—յանկարծ դուրս թռաւ բերնիցը։

Նորա ձայնի տխրութիւնը սաստիկ յուզեց, կսկծացրեց Վրթանէսեանի սիրտը։ Նա մի քանի խօսք ասաց Նորան մխիթարելու համար և հարցրեց։

—Ինչո՞ւ է Կատարինէ Սահառունին այդքան ուշ-ուշ գալիս քեզ մօտ։

—Որովհետև քեռակինը շատ սառն է ընդունում Նորան և առհասարակ...։

—Գիտեմ, իշխանուհին քո ուղածի հակառակն է անում, որովհետև չը կարողացաւ քեզ համոզել պսակուելու Տրունիցկու հետ։ Լա՛ւ, իսկ քեռի՞ն, նա՛ ինչպէս է վերաբերւում այդ հարցին։

—Քեռին շատ չէր ստիպում, որովհետև նա առհասարակ դէմ է հայ աղջիկների օտարազգիների հետ պսակուելուն։

—Եւ կատարեալ իրաւունք ունի։

—Ի՞նչ ես միտք անում, Նիկօլա։

—Մտածում եմ այն պայմանների մասին, որոնց մէջ դու ապրում ես. ինձ դեռ երբէք այնքան պարզ չէր թուել այդ պայմանների անհեթեթութիւնը որքան այսօր։

—Ցետո՞յ։

—Զարմանում եմ, թէ ի՞նչպէս ես կարողացել անվնաս մնալ այդպիսի պայմաններում։

—Դորա պատճառն այն է, որ ես ինձ շրջապատող կեանքի վերայ նայում եմ իբրև մի օտար, ինձ համար խորթ բանի վերայ։ Ես ինքս էլ չեմ հասկանում, ինչիցն է, որ, միայն գրքերում կարդացած լինելով, թէ կայ և ուրիշ տեսակ կեանք, ես հաւատացած եմ, որ ապագայում ինձ աւելի լաւ կեանք է վիճակուած։

Ասաց այդ՝ զգացուած ձայնով՝ և նազելի շարժմունքով յետ

գցեց սև մազերը. աչքերը և երեսը վառում էին. Վրթանէսեանը բռնեց ձեռքը՝

—Ձեր մէջ, կանանց մէջ, սիրելի Հեղինէ, մի ինչ-որ զօրաւոր բնազդումն կայ, որի շնորհիւ դուք զարմանալի հեշտութեամբ մաքրւում էք կեղտից ու ցեխից և յաճախ ձեր հոգու ազնւութեամբ յաղթում էք արտաքին անբարեյաջող հանգամանքները։

Իշխան Նակունին եկաւ և ընդհատեց նոցա խօսակցութիւնը։

Հետևեալ առաւօտը Վրթանէսեանն ու Հեղինէն բաժանուեցին իրարից։ Երկուսն էլ միմեանց ամենաքաղցր զգացմունքով էին լի-շում։ Զորս ամիսը նոցա համար շատ շուտ անցաւ, բայց ոգևոր-ւած ուսանողի ազդեցութիւնը վաղանցուկ չ'եղաւ. նորա ցանած սերմը շատ խոր արմատ քցեց Հեղինէի սրտում։

Թէև Հեղինէն շատ հարցերի մասին ինքնուրոյն հայեացք էր կազմել, բայց շատ բան էլի նորա համար մութն էր. նրան ամենից աւելի հետաքրքրող հարցերից շատերը ինքը չէր կարողանում լու-ծել, և այդ պատճառով նորա աշխարհահայեացքը շատ որոշ չէր։

Վրթանէսեանի դնալուց յետոյ մի քանի շաբաթ էր անցել։

—Շնորհաւորում եմ ծնունդդ, Հեղիկ,—աղաղակելով ներս ընկաւ Հեղինէի սենեակը տիկին Սահառունին և հանեց գրպանից մի փոքրիկ արկղ։

—Զուր ես նեղութիւն քաշել, սիրելի Կատեա, դու գիտես, որ ես զուքս ու զարդարանք սիրողներիցը չեմ։

—Դիտեմ, հոգիս, բայց վերցրու այս ինձնից քեզ յիշատակ։

Սահառունին հանեց արկղիկից մի գեղեցիկ փոքրիկ մեդալիոն՝ մէջը դրած իւր լուսանկարը։

—Ա՛խ, ես բոլորովին մոռացել էի, որ այսօր քո ծննդեան օրն է, շնորհաւորում եմ,—կիսաբերան ասաց իշխանուհին, տհաճու-թեամբ վայր դնելով խաղաթղթերը և համբուրեց Հեղինէի ճա-կատը։ 19 տարիդ լրացաւ, գիտե՞ս, Հեղինէ,—առանձնապէս շեշտե-լով աւելացրեց իշխանուհին, և նորից խորասուզւեց թղթախաղի մէջ։

Երբ որ տիկին Սահառունին պատրաստւում էր գնալու, իշխա-նուհին խնդրեց նորան, որ մնայ ճաշին։

—Կը մնամ միայն այն պայմանով, որ Հեղինէն վաղը գայ ինձ մօտ ու ամբողջ օրը մնայ։

—Ապահով եղէք, Եկատերինա Իւանովնա, ձեր խնդիրքը կը կատարուի, լսեց կողքի սենեակից իշխանի ձայնը։

Ասաց իշխանը ու մտաւ այն սենեակը, որտեղ նոքա էին, համբուրեց Հեղինէին ու տուեց նրան մի փոքրիկ մինէազարդ ժամացոյց։

—Ի՛նչ հիանալի կին էք դարձել,—դիմեց նա տիկին Սահառունուն։

—Հապա ի՞նչ էիք կարծում, կոտրտելով գլուխը թափ տուեց նա։ Դուք, իշխան, ամենևին չէք փոխուել։

—Դուք ինձ միթէ յիշո՞ւմ էք։

—Ինստիտուտի աշակերտուհիներից ո՞ր մէկը չի յիշում բարի քեռուն, որ միշտ քաղցրեղէններ էր բերում իւր քրոջ աղջկան։—Իշխանը բարձրաձայն ծիծաղեց։

—Ե՞րբ էք մեզ ծանօթացնելու ձեր հոգևորի հետ։ Նրա հօր հետ լաւ բարեկամ էինք։ Դուք այսօր մեզ մօտ էք ճաշելու, վճռուած բան է։—Եկատերինէն ի նշան հաւանութեան ժպտաց։

—Շատ լաւ, ես ճաշին հետս ուրախ հիւրեր կը բերեմ։

Գեներալը գնաց։

Միւս օրը իշխանուհին Հեղինէին տարաւ Սահառունիների մօտ։

—Ո՞ւր է, ինչու չի գալիս մարդդ այսքան ժամանակ, Կատեա։

—Շուտով կը գայ։ Բայց ի՞նչ անհամբերութեամբ ես սպասում նորան, Հեղիկ, չը լինի կարծում ես, թէ շատ գեղեցիկ է։

—Քո նկարագրածին նայելով, պէտք է որ այդպէս լինի,—ժպտաց հեղինէն։

—Զուր ես կարծում, հոգիս. վախենում եմ, հիասթափուես։ Բայց ճիշտ որ ինչո՞ւ այսքան ուշացաւ, շուտով ժամի երեքը կը լինի։ Ես քեզ շատ անյարմար օր հրաւիրեցի։ Մոռացել էի որ այսօր երեկոյեան մեզ մօտ հաւաքուելու են մի գործի համար։ Գէորգը երևի ընկերներից մէկի մօտ նստած խօսքով է ընկել։

Կողքի սենեակում լսեց Սահառունու ոտնաձայնը։

—Ահա և իմ հոգևորը, աղաղակեց Կատեան։ Պարոն, ձեր կողմից շատ անքաղաքավարութիւն է այսքան երկար սպասել տալ։

—Ներողութիւն, սիրելիս, իմ կամքովս չեմ ուշացել, գործ ունէի։

Մինչև Կատեայի ծանօթացնելը, Հեղինէն կարողացաւ նկատել Սահառունու բարձր հասակը, գունատ և, թէև անկանոն, բայց ազդու դէմքը՝ սև, մի քիչ գանգուր մազերով։ Բայց ամենից աւելի համակրելի արտայայտութիւն էին տալիս նորա դէմքին սպիտակ, բաց ճակատը և մեծ, մուգ աչքերի անկեղծ հայեացքը։

—Այնքան է խօսել ձեր մասին կինս, որ ես առանց տեսնելու համարեա ճանաչում էի ձեզ,—ասաց Սահառունին նստելով Հեղինէի կողքին։

—Ի՞նչն էր խանգարում ձեզ կատարելապէս ծանօթանալու ձեր կնոջ ընկերուհու և դեռ աւելի՝ ազգականուհու հետ,—հարցրեց նա ժպտալով։

—Այդ որ՝ է՛լ մի ասի,—ընդհատեց նորա խօսքը Կատեան. Գէորգս մարդամէջից փախչող է։

—Այս անգամուայ նկատմամբ ասածդ իրաւացի չէ։ Ես երկու անգամ գնացել եմ իշխան Շակունու մօտ. առաջին անգամին ոչ ոք չը կար տանը, երկրորդ անգամ՝ ինձ ասացին, թէ իշխանուհին հիւանդ է, իսկ դուք, օրիորդ, պարապում էիք ուսուցչի հետ։

—Հեղինէն միշտ կամ դաս է առնում կամ ուրիշին դաս է տալիս, դա այդ պակասութիւնն ունի, կիսահեգնօրէն ասաց սեղանատուունից Կատեան։

Այդ խօսքերի հեգնական եղանակը գուր չեկաւ Սահառունուն, որ իսկոյն աւելցրեց.

—Սակայն այդ շատ գովելի պակասութիւն է, այդ պակասութեան շնորհիւ մարդ կարող է իւր բնաւորութեան շատ վատ կողմերը ուղղել։

—Ով գիտի դուք ինչ եզրակացութիւններ հանէք Կատեայի խօսքերից, կարմրելով ասաց Հեղինէն։

—Միք վախենալ, մտքովս ոչինչ վատ բան չ՚անցաւ։ Ես մի բան եզրակացրի և եթէ չը վախենայի թէ հաճոյախօսութեան տեղ կ՚ընդունէք, կը յայտնէի ձեզ եզրակացութիւնս։

Սահառունու պարզ, բարեկամական վարմունքը քիչ քիչ դրաւեց Հեղինէի սիրտը և նա վստահաբար նայեց նորան։

—Մի օր կ՚ասէք ինձ, թէ ի՞նչ եզրակացրիք, այնպէս չէ՞ Գէորգ Աղեքսանդրուիչ։—աշխուժով արտասանեց Հեղինէն։

—Դէ՛, համեցէք ճաշելու, լսեց Կատեայի ձայնը։

Ճաշը շատ ուրախ անցաւ։ Վաղուց էր, որ Հեղինէի սիրտը այնքան չէր ուրախացել, որքան այդ օրը։

Ժամի վեցի մօտերքը Սահառունու առանձնասենեակը սկսեց լցուել երիտասարդներով։ Ներողութիւն խնդրելով Հեղինէից, նա գնաց նոր հիւրերի մօտ։ Այնտեղ շուտով սկսուեց բարձրաձայն խօսակցութիւն. տաք տաք վիճում էին։ Հեղինէի ու Կատեայի նստած սենեակից պարզ լսւում էին նոցա բոլոր խօսքերը։ Ժամի 8-ին օրիորդին յայտնեցին, որ իշխանուհին կառքը ուղարկել է նորա յետևից։ Իշխանի քէֆն եկաւ, որ տեսաւ Հեղինէին ուրախ ու զուարթ տրամադրութեան մէջ, և խոստացաւ յաճախ թողնել նորան Սահառունիների մօտ, բայց, որովհետև իշխանուհին շատ անդամ հակառակում էր այդ բանին, այդ բաղդին Հեղինէն շատ ուշ ուշ էր արժանանում։ Նա մեծ ուրախութեամբ էր յիշում Սահառունիների տանը իւր անցրած մի քանի ժամերը, նա զգում էր, որ այնտեղ սիրում է մի ուրիշ, աւելի բանական կեանք, որ մարդիկ այնտեղ հաւաքւում են ոչ թէ դատարկ ժամանակ անցկացնելու համար, այլ մտածում, աշխատում են օգտակար գործ կատարելու, մի որ և է նպատակ ունեն առաջներին։

Այն օրից երբ լրացաւ Հեղինէի 19 տարին, նա նկատում էր, որ քեռակինը ուզում է նորան անպատճառ մարդու տալ։ Այնուհետև Հեղինէն իրան օտարի նման էր զգում քեռու տանը. կարծես խորթ լինէր։ Իւր անմխիթար վիճակից նա միայն մի ելք էր տեսնում, այն է պսակւել մի արժանաւոր և սիրած մարդու հետ, և առիթը շատ շուտով ներկայացաւ։

Մի օր իշխանուհին ու Հեղինէն գնացել էին քաղաքից դուրս գտնուող այգիներից մէկը Նւազահանդէսի (կոնցերտ)։ Իշխանուհու հին ծանօթներից մէկը՝ գեներալ Միհրանովի կինը՝ ծանօթացրեց նորան և Հեղինէին մի երիտասարդի հետ, որի գեղեցիկ տեսքը և նուրբ ձևերը երկուսին էլ դուր եկան։ Հեղինէն նորան արդէն տեսել էր Սահառունիների տանը, բայց հարևանցի կերպով։

—Ամիրանովը ամուսնուս ընդունակ և ճշտապահ աստիճանա-

ւորներից մէկն է։ Ուսումառած, լաւ կրթութիւն ստացած, յաջողակ մարդ է, մի խօսքով, ես հաւատացած եմ, որ նա իւր փայլուն ընդունակութիւնների շնորհիւ շատ առաջ կ'երթայ,—զովաբանում էր Ամիրանովին Նլիդաւետա Բոգդանովնա Միհրանովան իշխանուհու առաջ, մինչդեռ Հեղինէն նոր ծանօթի հետ զմայլում էր գիշերայ գեղեցկութիւններով և երաժշտութիւնով։ Միհրանովան միտքը դրեց պսակել Ամիրանովին Հեղինէի հետ, գիտենալով, որ դորանով թէ իշխանուհուն և թէ իւր մարդու աստիճանաւորին մեծ ծառայութիւն մատուցած կը լինի։ Նա իրրև գործնական կին լաւ գիտէր, որ մարդիկ այդպիսի ծառայութիւններ չեն մոռանում։

Հետևեալ օրը Ամիրանովը այցելութեան գնաց իշխան Նակունուտունը։ Նա շուտով գրաւեց թէ իշխանի թէ իշխանուհու համակրութիւնը և սկսեց յաճախել նոցա մօտ։

Ամիրանովը աղքատ տանից էր։ Նորա քեռին Ուբարովը, որ ունևոր մարդ էր և ամուրի, նորան դեռ երեխայ ժամանակը տարել էր իւր հետ Մոսկուա, ուր ինքը առևտուրով էր պարապում։ Ուբարովը ոչինչ չէր խնայում իւր քեռորդու համար. նա նորան տուեց Մոսկուայի ամենալաւ գիշերօթիկ դպրոցը, իսկ դպրոցում ուսումը աւարտելուց յետոյ տարեկան նրան որոշեալ գումար էր տալիս, որ համալսարանում ուսումը շարունակի։ Այն ժամանակը, երբ Ամիրանովը պէտք է երկրորդ կուրսից երրորդը փոխէր, քեռուն դժբախտութիւն պատահեց. նա կոտր ընկաւ և էլ չէր կարողանում օգնել քեռորդուն։ Ամիրանովը սկսեց ելք փնտրել իւր դժուար դրութիւնից և շուտով նրան յաջողեց մի քանի շահաւէտ դասեր գտնել։ Իսկ քեռուն նա սկզբում զանազան ճշմարտանման պատրուակներով քանի գնում աւելի ուշ ուշ էր այցելում, յետոյ վերջապէս սկսեց բացայայտ արհամարհանքով վերաբերուել նրան։ Քեռորդու ապերախտութիւնը այն աստիճան զայրացրեց Ուբարովին, որ նա վճռեց ընդ միշտ դադարեցնել նորա հետ ազգականական յարաբերութիւնները։

Ամիրանովը դեռ համալսարանում եղած ժամանակը հմուտ էր ամէն բանից օգուտ քաղելու արհեստին. նա գիտէր թէ ում հետ ունեցած ծանօթութիւնից ու յարաբերութիւնից իրան շահ կարող է լինել, ում մօտ ինչ մտքեր պէտք է պաշտպանի և ինչպէս պէտք է վարուի, որ թակարդ չընկնի. այնպէս որ աղքատութիւնը նորա

ապագայ ասպարէզի համար արգելք չէր կարող լինել։ Նորա քաղաքավարի վարմունքը տիկինների հետ, կանոնաւոր գծերով, թուխ, գեղեցիկ դէմքը, օրիորդների հետ զանազան պատարկ բաների մասին ճարտար խօսելու ընդունակութիւնը, նոցա հայրիկների վերաբերութեամբ պարտուպատշաճ յարգանքի ցոյցերը և երեխաներին գրաւող պառաստ ընծաները՝ համարեա ամեն տեղ յաջողութիւն էին ունենում և նա գրկաբաց ընդունելութիւն էր գտնում։ Ամիրանովը շատ շուտ հասկացաւ, որ իրան շատ ձեռնտու է պակուել Հեղինէի հետ։ Բացի դորանից Նրան շատ էր դուր գալիս օրիորդի գրաւիչ ու գեղեցիկ դէմքը. այնպէս որ մի շաբաթ անցած նա բոլորովին գրաւեց այդ յաջողակ մտքով։

— Ճիշտ է, ես դեռ ջահել եմ և ասպարէզս դեռ ապահովուած չէ, բայց չէ՞ որ գեղեցիկ կնոջ, ազդեցիկ ազգականների, կապերի և կանանց իրանց ամուսինների շահերը պաշտպանելու բնատուր վարպետութեան շնորհիւ աւելի հեշտ կը լինի հասնել ցանկալի նպատակին,—ինքն իրան մտածում էր նա, ինքնագոհ ժպիտն երեսին երևակայելով իրան առաջը բացուող փառաւոր ապագան։

Ամիրանովը իւր բնատուր գործնականութեան շնորհիւ կարծածիցը աւելի շուտ կարողացաւ իրագործել իւր մտադրութիւնը։ Տեսնելով որ օրիորդը ընթերցանութիւնով ու երաժշտութիւնով է պարապում միշտ, նա սկսեց նորա համար գրքեր ու նոտաներ տանել. շատ անգամ էլ նորա համար գրքեր էր կարդում, և գտնելով նորա թոյլ երակը, պաշտպանում էր նորա սիրած գաղափարները կեղծ ոգևորութեամբ։ Հեղինէն չէր նկատում նորա կեղծութիւնը, որովհետև նա շատ լաւ էր կեղծում. ուրախութեամբ լսում էր նորա խօսքերը և աշխատում էր առիթներ գտնել նորա հետ մենակ մնալու։

Ամիրանովը նկատելով, որ օրիորդը չի սիրում իրանց մօտ հաւաքուող հասարակութիւնը և փախչում է նորանից, ինքն էլ շատ անգամ հեռանում էր միւս հիւրերից, գնում էր նորա մօտ պատշգամբը և սկսում էր անխնայ յարձակուել այդ հասարակութեան վերայ։

— Եկայ ձեզ հետ մաքուր օդ ծծելու, օրիորդ Հեղինէ, քիչ էր մնում սիրտս պատռէր նոցա անմիտ զեւզեկութիւնից։

—Ի՞նչ է ձեզ ամենից աւելի վրդովեցնում,—հարցրեց Հեղինէն, հանգիստ նայելով նորա երեսին։

—Նոքա կանանց վերայ նայում են իբրև սեպհականութեան վերայ, օրիորդի վերայ—իբրև ապրանքի վերայ, որից պէտք է ազատուել յարմար առիթ պատահածի պէս. նոցա նման անզգայ մարդկանց ի՞նչ բանն է խօսել կնոջ պէս ազնիւ ու սքանչելի էակի մասին։

—Զարմանալի է, Միխայիլ Պետրովիչ, դուք այդպէս զայրացած էք խօսում նոցա մասին, իսկ հետները շատ քաղցր էք վարուում. ներեցէք, որ այսպէս անկեղծ յայտնում եմ ձեզ իմ միտքս,—ասաց օրիորդը և սաստիկ կարմրեց։

Ամիրանովը մի քիչ շփոթուեց, բայց վարժուած լինելով յուզմունքները ղպելու, շուտով ուղղուեց.

—Ընդհակառակը, ես շատ շնորհակալ եմ, որ անկեղծ էք վարուում ինձ հետ, անկեղծութիւնը մտերմանալու առաջին քայլն է. միւս կողմից՝ այդ միջոցով միայն մենք կարող ենք փարատել ժամանակ առ ժամանակ մեր մէջ ծագող տարակուսանքները։

Ամիրանովի քարցրահնչիւն ձայնը մի քիչ գողում էր. Հեղինէն զգացուեց և սիրալիր հայեացք ձգեց նորա վերայ։

—Բանն այն է, օրիորդ, որ այդ տեսակ մարդկանցից շատերը նոյնպէս կատարելութեան են ձգտում, բայց թոյլ կամքի տէր լինելով, ուզում են առանց ջանքի, առանց աշխատանքի կատարելութեան հասնել,—և ահա այդ դէպքում, եթէ նոքա տեսնում են, որ իրանց հետ արհամարհանքով են վերաբերուում, նոցա սրտում ծնացած վերջին կայծն էլ հանգչում է։ Միւս կողմից,—շարունակում էր նա ձայնը դողացնելով, որ սաստիկ տպաւորութիւն է գործում լսողների վերայ,—անարատ սիրտը մարդկանց ատել չի կարող։ Ատելութիւնը վնասակար բան է. անհամբերող ոգին կորցնում է որ և է լուսաւոր գաղափարով ոգևորուելու ընդունակութիւնը։

Ամիրանովը նկատեց, որ իւր խօսքերը Հեղինէի վերայ սաստիկ տպաւորութիւն գործեցին։

Հետևեալ օրը մտնելով Շակունիների մօտ նա տեսաւ, որ օրիորդը խորասուզուած է ընթերցանութեան մէջ, բարեկամաբար խրախուսեց նորան և սկսեց երկար ու բարակ խօսել կանանց կրթութեան օգտի մասին։

Հեղինէի միտքը զբաղուած էր կանանց ազատութեան, էմանսիպացիայի հարցով։ Ամիրանովը այդ գիտէր և երբեմն, աչքի տա-

կով թաքուն նայելով նորա վերայ, ինքն իրան ասում էր.—այդ բոլորը քո սիրուն, տաքգլխի ցնորքներն են, մարդու գնաս՝ կը խոհեմանաս։ Քեզնից թունդ օրիորդներ ենք տեսել, բայց մարդու հմտութիւնն ու հաստատ կամքը ամեն բան ուղղել են։

Կրթութեան մէջ Ամիրանովը ամենից բարձր էր դասում երաժշտագիտութիւնը. թէև շատ քիչ էր պատահում, որ նորա հոգին զմայլէր երաժշտութեան քաղցր հնչիւններից, բայց նա երաժշտագիտութիւնը անհրաժեշտ էր համարում բարձր դասին պատկանող կնոջ համար, երաժշտութիւնը հասարակութեան մէջ փայլելու լաւ միջոց համարելով։ Հեղինէն շատ լաւ էր դաշնամուր ածում։ Ամիրանովը ժամերով ստիպում էր նորան ածել, բարձրաձայն յայտնում էր իւր հիացումը, գովում էր նորա ձիրքը և երկար ու բարակ խօսում էր երաժշտութեան նշանակութեան և այն խորը ազդեցութեան մասին, որ նա գործում է մարդու սրտի վերայ։

Անցաւ մի շաբաթ, և Հեղինէն սկսեց մտերմանալ Ամիրանովին, համարելով նորան իրանց տանը այցելող սակաւաթիւ երիտասարդներից ամենաազնիւը և ամենախելօքը, և շուտով հաւանութիւն տուեց, երբ որ Ամիրանովը պսակելու առաջարկութիւն արեց։

Հեղինէն զգում էր, որ Ամիրանովին դեռ բոլորովին հոգով սրտով չի սիրում, ոչ էլ մարդու գնալու մեծ փափագ ունէր, բայց որ միտքն էր գալիս քեռակնոջ հետզհետէ սաստկացող գանգատները և անվերջանալի փնթփնթոցը ու նորա խորհրդաւոր շշնջոցը քեռու հետ, ամուսնութիւնը փառք էր երևում այդպիսի կեանքի հետ համեմատելով։ Քեռու տանը Հեղինէն իրան վատ էր զգում. իշխանուհու արհեստական քաղցրութիւնը, վարմունքի իշխանական եղանակը և նորա որբութիւնը յիշեցնող անվերջանալի ակնարկութիւնները, իսկ երբեմն մինչև անգամ և դառն նախատինքները՝ անտանելի էին դարձնում նորա վիճակը, չը նայելով որ նորան շատ էր սիրում իւր բարեսիրտ քեռին, որ, ինչպէս առաջ էլ ասացի, ցերեկը համարեա սկի տանը չէր լինում կամ թէ տուն էր գալիս մի խումբ հիւրերի հետ։ Հեղինէն վաղուց համոզուել էր, որ իւր և քեռակնոջ ջուրը մի առուով չի կարող գնալ. ինչ որ ասում է, ինչ բան որ բռնում է, իշխանուհու սրտովը չի գալիս, փնովում է. ա՛յս այսպէս չէ ո՛ւ, ա՛յս չի ընդունուած հասարակութեան մէջ, ա՛յս սազ չի գայ

ջահել աղջկան. ա՛յ, կը պսակուես, այն ժամանակ ինչ կ'ուզես արա,—լսում էր նա շատ անգամ իշխանուհուց և այդ պատճառով ամուսնութիւնը նրան վարդագոյն, հրապուրիչ էր երևում։

—Շնորհաւոր լինի, հոգիս,—աղաղակելով ներս ընկաւ Նորա սենեակը Կատեան նշանախօսութիւնից մի քանի օր յետոյ։ Ի՞նչ հիանալի մարդու հետ ես պսակուելու. նա քեզ թագուհու պէս կը պահի, կը բախտաւորացնի։ Դու որ՝ բոլորովին արժանի ես այդ բախտին, Հեղինէ։

Հեղինէն երախտալից սրտով նայեց ընկերուհուն և սիրով համբուրեց Նորան։

—Գիտեմ, Կատեա, որ դու ուրախ ես իմ բախտաւորութեանը։ Ամիրանօվի հետ վաղո՞ւց ես ծանօթ։

—Ի հարկէ. նա իմ մարդու ընկերն է։

—Մարդդ դեռ չի՞ եկել։

—Զէ, նա մի ամսից շուտ չի վերադառնայ։ Վաղը ես նրան կը գրեմ, ուրախութիւնից չի իմանայ ինչ անի։ Գէորգը ինձ շատ անգամ է ասել. քո Հեղինէն հիանալի աղջիկ է, Աստուած Նորան երջանիկ ապագայի արժանացնի։

—Ճիշտ է,—մտածում էր Հեղինէն Նշանդրէքի նախընթաց օրը,—Նիկողայոսը ինձ զգուշացնում էր, որ առանց սիրելու չը պսակուեմ, բայց միթէ՞ բարեկամութիւնը, ո՛չ, բարեկամութիւնից էլ զօրեղ համակրութիւնը՝ նոյնպիսի սուրբ զգացմունք չէ՞ և չի՞ փոխուում սէրի։ Ամիրանօվը շատ լաւ կողմեր ունի, խելօք է, զգայուն սրտի տէր, բայց Նորանում մի ինչ-որ անըմբռնելի յատկութիւն կայ, որ ինչ անում եմ՝ չեմ կարողանում որոշել ու սահմանել։ Ափսո՛ս Նիկողայոսը այստեղ չէ, նա շատ սուր դիտող է և անպատճառ իմ տարակուսանքս կը փարատէր։ Բայց ի՞նչ տարօրինակ մարդ եմ ես,—ասաց Նա, կարծես ուշքի գալով, և Նորա պայծառ, սիրալիր հայեացքը կանգ առաւ Նշանածի պատկերի վերայ... Ի՞նչ բան կարող է անցնել լուրջ և ուսումնական տղամարդու մտքովը, որ մեր, աղջիկներիս հասկացողութիւնից վեր է... շատ կարելի է, այն ժամանակ երբոր Նորա երեսին յայտնուում է այն անըմբռնելի նշոյլը, Նորա խելքը զբաղուած է լինում աղնիւ ու վսեմ մտածմունքներով... Այդպէս էլ պէտք է լինի անպատճառ, բոլոր փաստերը Նորան նպաս-

տաւոր են, անցաւ Հեղինէի մտքովը և Նորա դէմքը սկսեց աւելի և աւելի զարթանալ։ Մենք միասին կը պարապենք, կ՚աշխատենք, Նա կը լրացնի իմ կրթութիւնը, ընդհանուր ձգտումներով, գաղափարներով կը ոգևորուենք, միթէ՞ այդքանը բաւական չէ որ ես Նորան հոգով սրտով սիրեմ։ Նա երէկ ինձ ասում էր, որ կեանքումը ոչ մի ժամանակ Նորա սիրտը այնպիսի քաղցր րոպէներ չի զգացել, ինչպէս ինձ հետ։ Նա սիրում է խեղճ որբ աղջկան ամենաանշահասէր սիրով.—այսքան ժամանակ միթէ՞ մէկն ու մէկը ինձ վերայ Նորա նման սաստիկ տպաւորութիւն գործել է։ Սիրտս ինձ ասում է, որ քեզ հետ բախտաւոր կը լինեմ, Միքայէ՛լ։ Այսուհետև դու իմն ես։ Մե՛ծ է շնորհքդ, Աստուած, այսուհետև էլ ես ժենակ չեմ,—համարեա արտասանելով մտածում էր Հեղինէն, լի հաւատով և յոյսով գէպի լաւը, դէպի բարին։

Միւս առաւօտը Նա սովորականից դուրս ուրախ ու զարթ դուրս եկաւ իւր սենեակից թէչ խմելու։

Մէկ—երկու շաբաթ անցած իշխան Նակունին շքեղ հարսանիք կատարեց։ Բարի գեներալը ուրախութիւնից ոտների վերայ պար էր գալիս։

—Տե՛ս, հաւատարիմ եղիր մարդուդ, շատ կտրիճ տղայ է, սկի նման չէ այժմեան մեծամիտ լակոտներին,—ճանապարհ էր դնում Նորան գեներալը։

Աստուած քեզ բախտի արժանացնի, աւելացրեց Նա յուզած ձայնով, օրհնելով Նորան պսակից առաջ, և գրկեց։

Իշխանուհին լացակրկնած յայտնում էր Նրան իւր սէրն ու գորովը և ասում էր բոլոր ծանօթներին, թէ ինքը անչափ ուրախ է տեսնելով իւր սրտի գուրգուրած փափագի կատարումը, այն է Հեղինէին իւր սրտի սիրած մարդուն տալը, և թէ յիմարութիւն է ժամանակի պահանջների դէմ վարելը։

(Կը շարունակուի)